ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1

Նշվածներից ո՞րն է <<Դեկորատիվ նկարչություն>> տեսակի պարապմունքի առաջադրանք:

1. երկրաչափական քանդակը
2. նատյուրմորտը
3. էջանիշի ձևավորումը
4. բնապատկերը

2

Ո՞րը դեկորատիվ, կիրառական արվեստի տեսակ *չէ:*

1. որմնագորգը (գոբելեն)
2. էստամպը
3. կարպետագործությունը
4. ապակենկարչությունը (վիտրաժ)

3

Ո՞րն է դեկորատիվ հորինվածքի կառուցման առաջնային պահանջը:

1. կոմպոզիցիայի արտահայտչականությունը
2. գունային համադրությունը /կոնտրաստ/
3. համաչափությունների պահպանումը
4. մասնիկների բազմազանությունը

4

Ո՞րը <<Բնօրինակից նկարչություն>> տեսակի պարապմունքի փուլ *չէ:*

1. զարդանախշի կազմումը
2. տեղադրումը թղթի մեջ
3. ստվերագծման կուլտուրան
4. հեռանկարի, լույսի և ստվերի կիրառումը

5

Նշվածներից ո՞րը կերպարվեստի տեսակ *չէ:*

1. գեղանկարչությունը
2. թատրոնը
3. գրաֆիկան
4. քանդակագործությունը

6

Կերպարվեստի ո՞ր ժանրին է պատկանում թռչունների և կենդանիների պատկերումը:

1. նատյուրմորտին
2. բնապատկերին
3. կենցաղային ժանրին
4. անիմալիստական ժանրին

7 **Ո՞ւմ կողմից է առաջին անգամ կիրառվել ակադեմիական նկարչության դասավանդման համակարգը:**

1. Ալբերտիի
2. Միռոնի
3. Դյուրերի
4. Պոլիկլետի

8 **Ի՞նչ է կոչվում հատուկ ապակու (սմալտա) գունավոր փոքր քառակուսիներից և այլն կազմված նկարը:**

1. վերատպություն
2. խճանկար
3. ապլիկացիա
4. գրավյուրա

9 **Տրվածներից ո՞րը չի ստեղծվում կիրառական և գեղագիտական միասնությամբ:**

1. արծաթյա գոտին
2. գոբելենը
3. բարձրաքանդակը
4. կավե աղամանը

10 **Ո՞վ է ուսուցման դիդակտիկայի սկզբունքների հեղինակը:**

1. Պեստալոցցին
2. Կոմենսկին
3. Բրյուլովը
4. Ժան Ժակ Ռուսսոն

11 **Նշվածներից ո՞րը գույնի հատկություն *չէ:***

1. բազմազանությունը
2. լուսեղությունը
3. տոնը
4. հագեցվածությունը

12 **Աշակերտի ընգրկվելը ստեղծագործական և մեկնաբանական գործունեության մեջ նրա ո՞ր ունակությունն է զարգացնում:**

1. տարածական պատկերացումների
2. սատարման և կարեկցանքի
3. գեղեցիկը զգալու և պատկերելու
4. առաջխաղացման ձգտումների

13 **Նշվածներից ո՞րն է կերպարվեստի դասավանդման առաջնային խնդիր:**

1. իրապաշտական վերարտադրության ձևավորումը
2. շրջակա միջավայրի գեղագիտական ընկալման զարգացումը
3. քննադատական մտածողության զարգացումը
4. ինքնահաստատման կարողության ձևավորումը

14 **Մատիտով, փայտածուխով, տուշով կամ նույն գույնի ներկով արված նկարը կոչվում է՝**

1. կոլլաժ
2. գեղանկարչություն
3. գրաֆիկա
4. զարդարվեստ

15 **Ի՞նչ է կոչվում այն սպիտակ թուղթը, կամ տախտակը, որը նախատեսված է ներկերը խառնելու և ցանկալի գույն ստանալու համար:**

1. շրջանակ
2. մոլբերտ
3. պաստել
4. ներկապնակ

16 **Որևէ բանի վրա տարբեր զարդապատկերներից (ֆիգուրներից), կտրտված որևէ նյութից և այլն ստեղծված գեղարվեստական պատկերը կոչվում է՝**

1. Մանրանկարչություն
2. Օֆորտ
3. Փակցանկարչություն (ապլիկացիա)
4. Լիտոգրաֆիա

17 **Արևմտյան լուսավորիչներից ո՞րը ներդրում ունի կերպարվեստի դասավանդման մեթոդիկայում:**

1. Լիոն Ֆեյխտվանգերը
2. Ժան Ժակ Ռուսսոն
3. Թեդդը
4. Յոհանես Բեխեռը

18 **Վերածննդի դարաշրջանում նկարչության դասավանդման մեջ ի՞նչն էր համարվում առաջնայինը:**

1. գծանկարը
2. գունատեսությունը
3. ծեփակերտումը
4. արվեստի պատմությունը

19 **Դեկորատիվ արվեստի ո՞ր տեսակի համար է հատկապես անհրաժեշտ ներկարարության արհեստը:**

1. փայտի գեղարվեստական փորագրության
2. գորգագործության
3. բրուտագործության
4. մետաղի մշակման

20 **Ո՞վ է ժամանակակից գոբելենի արվեստի հիմնադիրը Հայաստանում:**

1. Հռիփսիմե Սիմոնյանը
2. Սարգիս Մուրադյանը
3. Արմինե Կալենցը
4. Կարապետ Եղիազարյանը

21 **Նշվածներից ո՞րն է դեկորատիվ, կիրառական արվեստի սինթետիկ բնույթի արտահայտությունը:**

1. պատկերագրությունը
2. ձևի և դեկորի փոխներթափանցումը
3. ուղղությունների ազդեցությունը
4. կերպարվեստի տարբեր միջոցների համադրումը

22 **Ո՞րն է նկարչի ստեղծագործական երևակայության ամենահզոր սկզբնաղբյուրը:**

1. բնությունը
2. գույները
3. գրականությունը
4. թատրոնը

23 **Որո՞նք են հայկական քաղաքային տարազում կրառվող հիմնական գույները** :

1. կապույտը, 2. շագանակագույնը, 3. նարնջագույնը, 4. սպիտակը,
5. մանուշակագույնը, 6. դեղինը

1. 2,4,5,6
2. 1,4,5
3. 1, 2,3,4
4. 3,5,6

24 **Ո՞րն է հայկական տարազի հորինվածքի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. նյութը
2. գույնը
3. զարդանախշը
4. կառուցվածքը (կոնստրուկցիան)

25 **Աշխարհահռչակ թանգարաններից որո՞ւմ են առավելագույնս ներկայացվել ու լուսաբանվել տարազի և նորաձևության մեծաքանակ հավաքածուները:**

1. Լոնդոնի նորաձևության և տեքստիլի թանգարանում
2. Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում
3. Կիոտոյի հագուստի թանգարան-ինստիտուտում
4. Ֆլորենցիայի Գուչիի թանգարանում

26 **Ինչպիսի՞ն է ազգային տարազում կիրառվող հիմնական ուրվագիծը:**

1. լրիվ ընդգրկող
2. ազատ
3. սեղանաձև
4. ուղիղ

27 **Ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային նախադրյալներից է՝**

1. հիշողությունը
2. հանրահայտ նկարչի ստեղծագործությունը
3. հուզազգայական մթնոլորտը
4. ստեղծագործելու միջավայրը

28 **Կերպարվեստի ո՞ր տեսակին է պատկանում լինոփորագրությունը:**

1. գրաֆիկային
2. գեղանկարին
3. դեկորատիվ արվեստին
4. քանդակագործությանը

29 **Թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կոչվում է՝**

1. կոլաժ
2. օֆորտ
3. մոնոտիպիա
4. էստամպ

30 **Ո՞րն է հայկական արևմտյան տարազաձևի ամենաբնորոշ առանձնահատկությունը:**

1. գոտին
2. գլխի հարդարանքը
3. զարդանախշը
4. հարուստ ասեղնագործությունը

31 **Նշվածներից հայկական ավանդական տարազի հորինվածքում ինչպիսի՞ հին զարդանախշից է առավել հաճախ գործածվել:**

1. շրջանաձև
2. ռոմբաձև
3. քառակուսի
4. S-աձև

32 **Աշխարհում ամենահին տիկնիկներից է համարվում մամոնտի ոսկրից պատրաստված մարիոնետ տիկնիկը. որտե՞ղ է այն հայտնաբերվել:**

1. Չեխիայում
2. Իսպանիայում
3. Գերմանիայում
4. Ֆրանսիայում

33 **Ստեղծագործության վերլուծության համար առաջնահերթ ո՞ր կարողությունն է հարկավոր զարգացնել առաջին հերթին:**

1. վերլուծական մտածողությունը
2. հաղորդակցական կարողությունը
3. համադրական դիտարկումը
4. տեսողական ընկալումը

34 **Հայ մեծանուն նկարիչներից ո՞վ է թատերական հագուստի էսքիզներ կատարել:**

1. Մինաս Ավետիսյանը
2. Վարդգես Սուրենյանցը
3. Մարտիրոս Սարյանը
4. Արշիլ Գորկին

35 **Հին հայկական ավանդական հարսանիքում, որպես ավանդույթ հարսնացուին զարդերի հետ մեկտեղ սկեսուը ուրիշ ի՞նչ էր նվիրում:**

1. գլխի հարդարանք
2. սպասք
3. կարպետագործ անկողնապարկ
4. ոսկեթել ասեղնագործ կարմիր գոգնոց

36 **Որտե՞ղ է սկզբնավորվել տարբեր իրերի պատրաստումը պապիե-մաշեի տեխնիկայով:**

1. Չինաստանում
2. Գերմանիայում
3. Ճապոնիայում
4. Ֆրանսիայում

37 **Հայաստանի ո՞ր թանգարանում են ներկայացվել և ֆոնդերում պահպանվել հայկական տարազի առավել շատ նմուշներ:**

1. Հովհաննես Շարամբերյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանում
2. Երևանի պատմության թանգարանում
3. Հայաստանի պատմության թանգարանում
4. Էրեբունի թանգարանում

38 **Տրվածներից ո՞րն է թեմատիկ հորինվածքի տարր:**

1. ստեղծագործության նյութը
2. ստեղծագործության սկզբնաղբյուրը
3. ստեղծագործության գուներանգը
4. ստեղծագործության չափը

39 **Ուսուցման գործընթացում ո՞րն է դիտակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը:**

1. նպատակաուղղվածության ձևավորումը
2. ճանաչողական մտածողության զարգացումը
3. այլընտրանքային տեղեկատվության աղբյուր ստեղծելը
4. սովորողների պատրաստվածության ստուգումը

40 **Հայաստանում ո՞ր դարաշրջանում է ձևավորվել որմնանկարչությունը:**

1. միջնադարյան
2. նախնադարյան
3. հելլենիստական
4. ուրարտական

41 **Ո՞ր տաճարի բաղնիքում է պատկերված հայկական խճանկարչության առաջին նմուշը:**

1. Զվարթնոց
2. Արուճ
3. Էմբատավանք
4. Գառնի

42 **Ու՞մ անվան հետ է կապված *հելլենիզմ* եզրույթը:**

1. Բորիս Պիոտրովսկու
2. Արիստոտելի
3. Անատոլի Գեկկերի
4. Ալեքսանդր Մակեդոնացու

43 **Ո՞ր թվականին և որտե՞ղ է ձևավորվել Գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերությունը՝**

1. 1856 թ. Իրկուտսկում
2. 1879 թ. Մոսկվայում
3. 1870 թ. Սանկտ Պետերբուրգում
4. 1868 թ. Կիևում

44 **Նշված հայկական եկեղեցիներից ո՞րն է համարվում բազիլիկ տիպի կառույց:**

1. Երերույք
2. Հռիփսիմե
3. Գայանե
4. Շողակաթ

45 **Ո՞վ է հայ դասական բնանկարի հիմնադիրը:**

1. Փանոս Թերլեմեզյանը
2. Եղիշե Թադևոսյանը
3. Մարտիրոս Սարյանը
4. Գևորգ Բաշինջաղյանը

46 **Ո՞վ է ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության թղթադրամը:**

1. Ստեփան Աղաջանյանը
2. Հակոբ Հակոբյանը
3. Եղիշե Թադևոսյանը
4. Արշակ Ֆեթվաճյանը

47 **Ապարանի Վերածնունդ հուշահամալիրը քանի՞ հուշակոթողներից է բաղկացած:**

1. երեք
2. չորս
3. երեկու
4. մեկ

48 **Տրվածներից ո՞րը գեղանկարչության արտահայտչամիջոց *չէ:***

1. հեռանկարը
2. գիծը
3. գույնը
4. լուսաստվերը

49 **Գրիչ, մանրանկարիչ Թորոս Ռոսլինը ո՞ր մանրանկարչական դպրոցի ներկայացուցիչ է:**

1. Տաթևի
2. Կիլիկյան
3. Գլաձորի
4. Վասպուրականի

50 **Հովնաթանյան նկարչների տոհմի ներկայացուցիչներից ո՞վ է Շուշանիկ Նաղիրյանի դիմանկարի հեղինակը:**

1. Աղաթոն Հովնաթանյանը
2. Նաղաշ Հովնաթանը
3. Հակոբ Հովնաթանյանը
4. Հովնաթան Հովնաթանյանը

51 **Աբովյանի ծննդավայր Քանաքեռ գյուղի վերաբերյալ առաջին հիշատակությունը ո՞ր եկեղեցու գավթի արձանագրության մեջ է հիշատակվում:**

1. Գոշավանք
2. Սանահին
3. Տաթև
4. Հաղարծին

52 **Ո՞վ է Խաչտուր Աբովյանի տուն-թանգարանի բակում տեղադրված հուշարձանի հեղինակը:**

1. Արա Հարությունյանը
2. Արա Սարգսյանը
3. Ղուկաս Չուբարյանը
4. Անդրեաս Տեր-Մարուքյանը

53 **Ո՞վ է Երևանի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը:**

1. Լևոն Թոքմաջյանը
2. Արա Սարգսյանը
3. Ղուկաս Չուբարյանը
4. Արա Հարությունյանը

54 **Ու՞մ վրձնին է պատկանում «Նաիրայի դստեր հարությունը» կտավը:**

1. Իլյա Ռեպինի
2. Վասիլի Պոլենովի
3. Իսահակ Լեվիտանի
4. Վալենտին Սերովի

55 **Ո՞վ է «Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի» հուշարձանի հեղինակը**

1. Հակով Գյուրջյանը
2. Սարգիս Բաղդասարյանը
3. Արտաշես Հովսեփյանը
4. Ղուկաս Չուբարյանը

56 **Ո՞րտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» կտավը:**

1. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահում
2. Սանկտ Պետերբուրգի Ռուսական պետական թանգարանում
3. Հայաստանի ազգային պակերասրահում
4. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահում

57 **Ո՞վ է «Մենք ենք մեր սարերը»(Պապիկ -տատիկ) հուշարձանի հեղինակը՝**

1. Այծեմնիկ Ուրարտուն
2. Սարգիս Բաղդասարյանը
3. Դավիթ Երևանցին
4. Երվանդ Ոսկանը

58 **Ո՞վ է «Խնջույք Քուռ գետի ափին» աշխատանքի հեղինակը:**

1. Հովհաննես Այվազովսկի
2. Ստեփան Աղաջանյան
3. Ստեփանոս Ներսիսյան
4. Հակոբ Հակոբյան

59 **Ո՞վ է հին հունական դիցաբանության պանթեոնի «Արևի Աստվածը»:**

1. Աթենաս-Պալլասը
2. Զևսը
3. Աֆրոդիտեն
4. Հելիոսը

60 **Ո՞վ է «Հանճարն ու ամբոխը» կտավի հեղինակը:**

1. Եղիշե Թադևոսյանը
2. Փանոս Թերլեմեզյանը
3. Գևորգ Բաշինջաղյանը
4. Մարտիրոս Սարյանը

61 **Ո՞ր Աստվածներն են կազմում ուրարատական դիցարանի գերագույն եռյակը:**

1. Միհր,Նանե,Աստղիկ
2. Խալդի, Թեյշեբա, Շիվինի
3. Վահագն, Անահիտ, Տիր
4. Արամազդ,Անահիտ, Վանատուր

62 **Ո՞ր կինոռեժիսորն է նկարահանել «Մոռացված նախնիների ստվերները» ֆիլմը:**

1. Վահան Գալստյանը
2. Լևոն Աբրահամյանը
3. Սերգեյ Փարաջանովը
4. Երվանդ Ծատուրյանը

63 **Ո՞վ է հայկական դիցարանի «Ստորերկրյա աշխարհի Աստվածը»:**

1. Միհրը
2. Արամազդը
3. Սպանդարամետը
4. Տիրը

64 **Համապատասխանեցնել նշված հեղինակներին՝ ըստ մանրանկարչական դպրոցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Սարգիս Պիծակ, բ.Թորոս Տարոնացի, գ. Մարգարե, դ.Գրիգոր Տաթևացի

ա	բ	գ	դ

1. Տաթևի մանրանկարչության դպրոց
2. Անիի մանրանկարչության դպրոց
3. Գլաձորի մանրանկարչության դպրոց
4. Կիլիկյան մանրանկարչության դպրոց

65 **Համապատախանեցնել հետևյալ մայրաքաղաքը ըստ դարաշրջանների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա.Դվինը , բ. Տուշպան, գ. Երվանդաշատը, դ.Անին:

ա	բ	գ	դ

1. Հելլենիստական
2. Զարգացած միջնադարյան
3. Ուրարատական
4. Վաղ միջնադարյան

66 **Համատասխանեցնել քանդակագործների աշխատանքները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

Ա. Կոմիտասի հուշարձան, 2003, Դավիթ Երևանցի

Բ. Բուլատ Ակուջավա, 2002 թ. Գեորգի Ֆրանգուլյան



Գ. Սասունցի Դավիթ, 1971 թ. Վարազ Սամուելյան

Դ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 2005 թ. Խաչիկ Ղազանչյան

1. Ֆրեզնո
2. Մոսկվա
3. Փարիզ
4. Վատիկան

ա	բ	գ	դ

67 **Համապատասխանեցնել նշված վարպետներին ըստ ճարտարապետական կառույցների: Համապատասխան վանդակներում նշել համարները:**

ա. Անիի Մայր տաճար, բ. Նորավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի,
գ. Ախթամարի Սբ. Խաչ եկեղեցի, դ.Արատեսի վանքի գավիթը:

1. Մանուել
2. Մոմիկ
3. Սիրանես
4. Տրդատ

ա	բ	գ	դ

68 **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին իրենց աշխատանքներին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա.Խորհրդավոր ընթրիք, (1495-1498)

բ. Վեներայի ծնունդը, (1486)

գ.Սիքստինյան Տիրամայրը(1512-1513)

դ. Աղոթող ձեռքեր (մոտ. 1508)

.

1. Սանդրո Բոտիչելլի
2. Ռաֆայել Սանտի
3. Ալբրեխտ Դյուրեր
4. Լեոնարդո դա Վինչի

ա	բ	գ	դ

69 **Համապատասխանեցնել հետևյալ պաշտամունքային կառույցները իրենց գտնվելու վայրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:**



ա. Զվարթնոց

բ. Կարմրավոր



Գ. Հռիփսիմե

դ. Օձուն

1. Աշտարակ
2. Լոռի
3. Վաղարշապատ
4. Վաղարշապատից 3 կմ հարավ-արևելք

ա	բ	գ	դ

70

Համապատասխանեցնել դեկորատիվ ստեղծագործությունների անունները իրենց բնութագրերին: Համապատասխան վանդակներում նշել համարները:

ա. ասեղով և թելով գործված ստեղծագործություն

բ. գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն

գ. գործվածքի վրա կաղապարի միջոցով և հատուկ նյութերով պատկերված նկարազարդ ստեղծագործություն

դ. գնդասեղներով և թելերի հանգույցներով նախշազարդ ձեռագործ ստեղծագործություն

1. բատիկ
2. ժանյակ
3. մաքրամե
4. դաջազարդում

ա	բ	գ	դ